ծիրանի, և կ'ըսեն թէ թագաւորները տաճարին նուէր տարած էին զանոնք, և ներկուած էին ծովու խխունջի (խալիչան) արիւնով. այն ամէն հանդերձները որ խխունջի արիւնով կը ներկուէին, երկու գոյն կ'ունենային երկու տեղեր։ Կարծիք մ'ալ կայ որուն համաձայն, կարմիր էր հանդերձը, նման այն կարմիրին զոր մանկաբարձը Զարայի(*) ձեռքը կապեց եւ Ռախաբն ալ կապեց պատուհանին(**) եւ ունէր ծիրանի ֆոռտ (մօռ), և ըստ ոմանց ալ հանդերձը ներկուած էր ծիրանի և կարմիր, երկու տեսակ գոյնով (Բար. էջ 338)։

Զ. ԳԻՒՏ ԽԱՉԻ ՏԵՂԻՈՅՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աւանդութեան մը համաձայն, Գիւտ Խաչի արդի մատուռը, որ ժայռի մը մէջ փորուած հին ջրհոր մ'է, խաչի հրաշալի գիւտին տեղն էր(***)։ Կը պատմուի հրաշք մը որ կը հաստատէ խաչափայտին վաւերականութիւնը(****)։ Այս գիւտէն հինգ տարի յառաջ

(*) **Ծն.** ԼԸ. 27-30։

(**) **Յես.** Բ. 18. **Եբր.** ԺԱ. 31։

(***) Այս տեղւոյն մէջ խաչին հետ գտնուեցան, ըստ աւանդութեան, **խաչին տախտակը, սպունգը** եւ **բեւեռները**։ Բեւեռները որ Փրկչին ձեռքերն ու ոտքերը ծակած էին, չորսէն աւելի էին, ըստ Խորենացւոյն հինգ էին (Խոր. Բ. էջ 173)։ Անոր գլխին վրայ դրուած տախտակը եւ հաւանաբար ոտքին տակի փայտի մասը բեւեռով հաստատուած էին խաչին, անոնք ալ շարչարանաց միւս գործիքներուն նման, յարգանքով հաւաքուած էին։ Ս. Հեղինէն բեւեռներէն մին ծովը ձգած էր, եւ միւսները տուած էր իր որդւոյն։ Կոստանդիանոս անոնցմէ երկուքը իր սաղաւարտին եւ իր ձիուն սանձին վրայ զետեղած էր, երրորդն ալ իր արձանին կցած (Mis. հաս. II էջ 785)։

(****) Արգուլֆ (տե՛ս Géyer, էջ 239) կ'ըսէ թէ սիւն մը հաստատուած է հրաշքի տեղւոյն վրայ, քաղաքին հիւսիսային կողմը, որ